ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N - 101
«29» օգոստոսի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Կից Ձեզ եմ ներկայացնում Վարդաբլուր համայնքի ավագանու 29.08.2017թ. թիվ 32-Ա, 33-Ա, 34-Ն որոշումները:

Առդիր՝ 5 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Օհանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«28» օգոստոսի 2017 թվականի N 32-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻՑ 275 000 ԴՐԱՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 22-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

***Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.***

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | — | — | — |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Վարդաբլուր համայնքի ավագանու

2017 թվականի օգոստոսի 28-ի N 32-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| | |
|---|---|
| 1.Գասպարյան Այա | - 50 000 դրամ |
| 2.Եգանյան Արմինե | - 50 000 դրամ |
| 3.Շահբազյան Մարտին | - 50 000 դրամ |
| 4.Գևորգյան Մարգո | - 50 000 դրամ |
| 5.Սահինյան Քրիստինե | - 45 000 դրամ |
| 6.Տոնոյան Այիկ | - 30 000 դրամ |

Ընդամենը՝ - 275 000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» օգոստոսի 2017 թվականի N 33-Ա

### «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և 60-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «ՀՀ Լոռու մարզ Վարդաբլուրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Վարդաբլուր համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 28-ի «ՀՀ Լոռու մարզ Վարդաբլուրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 39-Ա որոշումը:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Մանուկյան Կամո Հայազատի | [signature] | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | [signature] | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | – | – | – |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | [signature] | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Հավելված
Վարդաբլուր համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 28-ի Ծ - 33-Ա որոշման

# «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հաստիքների թվաքանակը՝ 7:
2. Աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Մանկապարտեզի տնօրեն | 1 | 94 000 |
| Դաստիարակ | 2.25 | 92 600 |
| Երաժիշտ | 0.25 | 92 600 |
| Բուժքույր | 0.5 | 92 600 |
| Դաստիարակի օգնական | 1 | 77 910 |
| Խոհարար | 1 | 72 760 |
| Հաշվապահ | 1 | 77 910 |

Վարդաբլուր համայնքի
ղեկավար՝ Ռ. Օհանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀայաստանիՀանրապետությանԼոռումարզիՎարդաբլուրհամայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» օգոստոսի 2017 թվականի N 34- Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝

*Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնքի 2017 թվականի փոփոխված բյուջեն.

1.Եկամուտների մասով 29286.900 հազար դրամ
2.Ծախսերի մասով 30676.5407 հազար դրամ

- վարչական բյուջեի մասով 29286.900 հազար դրամ
- ֆոնդային բյուջեի մասով 1389.6407 հազար դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | [signature] | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | [signature] | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | – | – | – |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | [signature] | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ